

<b>Մասնագիտության նկարագիրը</b>	
<b>Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը</b>	Մասնագիտությունը՝ 0712.01.5 «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» Որակավորումը՝ 0712.01.01.5 «Տեխնիկ-էկոլոգ՝ շրջակա միջավայրի պահպանման և բնական պաշարների արդյունավետ օգտագործման»
<b>I. Դերը</b>	Տեխնիկ-էկոլոգը կատարում է շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների արդյունավետ օգտագործման կանոնների և նորմերի համապատասխանության նպատակով դաշտային դիտարկումներ, չափումներ, նմուշների (օդ, հող, ջուր, կենդանի օրգանիզմներ) վերցնում և անալիզներ, իրականացնում է շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, հավաքագրում և համակարգում (հսկավորում) է շրջակա միջավայրի վերաբերյալ բնապահպանական տեղեկատվությունը:
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	
<b>Խնդիրների բնագավառ 1. Դաշտային դիտարկումների և չափումների կատարում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- ապահովում է անհրաժեշտ չափիչ գործիքների ու սարքերի առկայությունը,</li> <li>- չափիչ սարքերը բերում է աշխատանքային՝ չափման համար պատրաստի վիճակի,</li> <li>- կատարում է դիտարկումներն ու չափումները,</li> <li>- գրանցում է դիտարկումների և չափումների արդյունքները,</li> <li>- կազմում է տեղեկանքներ (օրինակ՝ աղյուսակների, գծապատկերների, տեսաձայնային տեղեկատվության տեսքով)՝ ըստ պահանջի:</li> </ul>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- ապահովվել է անհրաժեշտ չափիչ գործիքների ու սարքերի առկայությունը,</li> <li>- չափիչ սարքերը բերվել է աշխատանքային՝ չափման համար պատրաստի վիճակի,</li> <li>- կատարվել է դիտարկումներն ու չափումները,</li> <li>- գրանցվել է դիտարկումների և չափումների արդյունքները,</li> <li>- կազմվել է տեղեկանքներ (օրինակ՝ աղյուսակների, գծապատկերների, տեսաձայնային տեղեկատվության տեսքով)՝ ըստ պահանջի:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 2. Աղտոտիչների բացահայտման նպատակով կենսոլորտի հիմնական բաղադրիչներից (օդ, հող, ջուր, օրգանիզմներ) նմուշառում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- ընտրում է նմուշներ վերցնելու պարագաները՝ ներկայացվող պահանջներին համապատասխան,</li> <li>- պահպանում է նմուշում ուսումնասիրվող ցուցանիշների անփոփոխ վիճակը (անշարժացում, կոնսերվացում, մեկուսացում),</li> <li>- կատարում է նմուշի (նմուշի և միջավայրի համար) պահպանման և</li> </ul>

	<p>տեղափոխման անվտանգության պահանջները,</p> <ul style="list-style-type: none"> <li>- պահպանում է նմուշների հանձնման կարգը:</li> </ul>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- ընտրվել է նմուշներ վերցնելու պարագաները՝ ներկայացվող պահանջներին համապատասխան,</li> <li>- պահպանվել է նմուշում ուսումնասիրվող ցուցանիշների անփոփոխ վիճակը (անշարժացում, կոնսերվացում, մեկուսացում),</li> <li>- կատարվել է նմուշի (նմուշի և միջավայրի համար) պահպանման և տեղափոխման անվտանգության պահանջները,</li> <li>- պահպանվել է նմուշների հանձնման կարգը:</li> </ul>
<b>հնդիրների բնագավառ 3. Տեղակայված անշարժ (ստացիոնար) կայանքների էլեկտրական սարքերի ցուցմունքների գրանցում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- ստուգում է սարքերի աշխատանքային վիճակը,</li> <li>- տեղեկացնում է հնարավոր խափանումների մասին,</li> <li>- ժամանակին գրանցում է սարքի ցուցմունքը,</li> <li>- կատարում է արդյունքների համակարգում և ներկայացում (օրինակ՝ աղյուսակների, գծապատկերների, տեսաձայնային տեղեկատվության տեսքով),</li> </ul>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- ստուգվել է սարքերի աշխատանքային վիճակը,</li> <li>- տեղեկացրել է հնարավոր խափանումների մասին,</li> <li>- ժամանակին գրանցվել է սարքի ցուցմունքը,</li> <li>- կատարվել է արդյունքների համակարգում և ներկայացում (օրինակ՝ աղյուսակների, գծապատկերների, տեսաձայնային տեղեկատվության տեսքով),</li> </ul>
<b>հնդիրների բնագավառ 4. Կատարում է լաբորատոր անալիզների (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) նախապատրաստական աշխատանքները, համակարգում և ներկայացնում արդյունքները</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- կատարում է անալիզի ենթակա նմուշի պատրաստումը,</li> <li>- ապահովում է անհրաժեշտ լաբորատոր սարքերի առկայությունը,</li> <li>- ապահովում է անալիզ կատարող սարքերի աշխատանքային վիճակը,</li> <li>- ըստ հանձնարարականի կատարում է չափումներ լաբորատոր սարքերով,</li> <li>- կատարում է արդյունքների համակարգում և ներկայացում (օրինակ՝ աղյուսակների, գծապատկերների, տեսաձայնային տեղեկատվության տեսքով):</li> </ul>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- կատարվել է անալիզի ենթակա նմուշի պատրաստումը,</li> <li>- ապահովվել է անհրաժեշտ լաբորատոր սարքերի առկայությունը,</li> <li>- ապահովվել է անալիզ կատարող սարքերի աշխատանքային վիճակը,</li> <li>- ըստ հանձնարարականի կատարվել է չափումներ լաբորատոր սարքերով,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>- կատարվել է արդյունքների համակարգումը և ներկայացումը (օրինակ՝ աղյուսակների, գծապատկերների, տեսաձայնային տեղեկատվության տեսքով):</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 5. Հետևում է բնօգտագործման տեխնիկական և տեխնոլոգիական գործընթացների բնապահպանական պահանջների կատարմանը, բնօգտագործման ոլորտում բնապահպանական նորմերի պահպանմանը</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- հետևում է բնօգտագործման տեխնիկական և տեխնոլոգիական գործընթացներում բնապահպանական պահանջների կատարմանը,</li> <li>- տեղեկացնում է բնօգտագործման տեխնիկական և տեխնոլոգիական գործընթացներում բնապահպանական հնարավոր անցանկալի փոփոխությունների մասին,</li> <li>- կանխարգելում է իր պատասխանատվության շրջանակներում հնարավոր բացասական փոփոխությունները,</li> <li>- օգտվում է գործող նորմատիվային համակարգերից և հետևում բնապահպանական ընդհանուր նորմերի պահպանմանը,</li> <li>- ներկայացնում է կատարված աշխատանքների արդյունքները:</li> </ul>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- հետևել է բնօգտագործման տեխնիկական և տեխնոլոգիական գործընթացներում բնապահպանական պահանջների կատարմանը,</li> <li>- տեղեկացրել է բնօգտագործման տեխնիկական և տեխնոլոգիական գործընթացներում բնապահպանական հնարավոր անցանկալի փոփոխությունների մասին,</li> <li>- կանխարգելել է իր պատասխանատվության շրջանակներում հնարավոր բացասական փոփոխությունները,</li> <li>- օգտվել է գործող նորմատիվային համակարգերից և հետևում բնապահպանական ընդհանուր նորմերի պահպանմանը,</li> <li>- ներկայացվել է կատարված աշխատանքների արդյունքները:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 6. Կատարում է վտանգավոր թափոնների կառավարման ոլորտի աշխատանքներ</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- կատարում է վտանգավոր թափոնների հավաքման կազմակերպչական աշխատանքներ,</li> <li>- կատարում է վտանգավոր թափոնների տեղափոխման կազմակերպչական աշխատանքներ,</li> <li>- կատարում է վտանգավոր թափոնների պահպանման կազմակերպչական աշխատանքներ,</li> <li>- կատարում է վտանգավոր թափոնների վնասազերծման կազմակերպչական աշխատանքներ,</li> <li>- կատարում է վտանգավոր թափոնների օգտահանման կազմակերպչական</li> </ul>

	աշխատանքներ:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- կատարվել է վտանգավոր թափոնների հավաքման կազմակերպչկան աշխատանքները,</li> <li>- կատարվել է վտանգավոր թափոնների տեղափոխման կազմակերպչկան աշխատանքները,</li> <li>- կատարվել է վտանգավոր թափոնների պահպանման կազմակերպչկան աշխատանքները,</li> <li>- կատարվել է վտանգավոր թափոնների վնասազերծման կազմակերպչկան աշխատանքները,</li> <li>- կատարվել է վտանգավոր թափոնների օգտահանման կազմակերպչկան աշխատանքները:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 7. Ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետի ղեկավարությամբ կատարում է անհրաժեշտ տեխնիկական հաշվարկներ, ոչ բարդ նախագծերի և պարզ սխեմաների մշակում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- կատարում է տեխնիկական հաշվարկներ,</li> <li>- մշակում է ոչ բարդ նախագծեր և պարզ սխեմաներ,</li> <li>- աշխատանքի կատարման ընթացքում հետևում է գործող ստանդարտների և նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:</li> </ul>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- կատարվել է տեխնիկական հաշվարկներ,</li> <li>- մշակվել է ոչ բարդ նախագծեր և պարզ սխեմաներ,</li> <li>- աշխատանքի կատարման ընթացքում հետևել է գործող ստանդարտների և նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 8. Ելակետային տեղեկությունների հավաքագրում և մասնակցություն կատարված աշխատանքների հաշվետվությունների կազմմանը</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- կատարում է նախնական տեղեկությունների հավաքագրում,</li> <li>- կազմում է կատարվող աշխատանքների նկարագիր,</li> <li>- կատարում է ընթացիկ փաստաթղթերի վարման աշխատանքներ և ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետների ղեկավարությամբ մասնակցում է հաշվետվությունների կազմմանը:</li> </ul>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- կատարվել է նախնական տեղեկությունների հավաքագրումը,</li> <li>- կազմվել է կատարվող աշխատանքների նկարագիրը,</li> <li>- կատարվել է ընթացիկ փաստաթղթերի վարման աշխատանքները:</li> </ul>
<b>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</b>	<p>Տեխնիկ-էկոլոգը պատասխանատու է</p> <ul style="list-style-type: none"> <li>- կենսոլորտի բաղադրիչներից նմուշների վերցման, տեղափոխման և պահպանման համար,</li> <li>- դաշտային դիտարկումների և չափումների, ավտոմատ սարքերի</li> </ul>

	<p>ցուցմունքների գրանցման ճշտության համար,</p> <ul style="list-style-type: none"> <li>- լաբորատոր անալիզների նախապատրաստման համար,</li> <li>- դիտումների, չափումների և անալիզների արդյունքների համակարգման և վերադասին ներկայացման համար,</li> <li>- բնօգտագործման տեխնիկական և տեխնոլոգիական գործընթացներում գործող ընդհանուր նորմերի, բնապահպանական պահանջների մասին աշխատանքային խմբի իրազեկման, կազմակերպման և պահպանման համար,</li> <li>- վտանգավոր թափոնների վնասագերծման համար:</li> </ul>
<b>IV. Լեզուները</b>	<p>հայերեն - լավ</p> <p>երկու օտար լեզու - բավարար</p>
<b>V. Համակարգիչը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Microsoft office ծրագրային փաթեթ</li> <li>- Internet</li> <li>- համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր</li> </ul>
<b>VI. Գիտելիքները</b>	<p>Տեխնիկ-էկոլոգը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- օդում, հողում, ջրում, կենդանի օրգանիզմներում օրգանական և անօրգանական նյութերի առկայության և պարունակության որոշման վերաբերյալ տեղեկատվություն,</li> <li>- կենսաբանական համակարգերի (կենդանի օրգանիզմ-տեղախումբ-համակեցություն-էկոհամակարգ) վիճակի, գործունեության և միջավայրի հետ փոխազդեցության վերաբերյալ տեղեկատվություն,</li> <li>- շրջական միջավայրի և առանձին բաղադրիչների (օդ, հող, ջուր, կենդանի օրգանիզմներ) վիճակի և դրա փոփոխության, պահպանության և վերականգնման վերաբերյալ տեղեկատվություն,</li> <li>- շրջակա միջավայրի բաղադրիչների քիմիական բաղադրության, միջավայրում ընթացող ֆիզիկաքիմիական և կենսաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվություն,</li> <li>- բնօգտագործման և բնապահպանության ոլորտում ստանդարտացման և սերտիֆիկացման վերաբերյալ տվյալներ,</li> <li>- շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի ցուցանիշների չափիչ սարքերի և գործիքների շահագործման վերաբերյալ տեղեկատվություն,</li> <li>- աշխատանքային անվտանգության և առաջին բուժօգնության վերաբերյալ տեղեկատվություն:</li> </ul>
<b>VII. Կարողությունները և հմտությունները</b>	<p>Պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- կարողանա հաղորդակցվել աշխատանքի վայրում,</li> <li>- ընտրել աշխատանքների կատարման առավել արդյունավետ տարբերակներ,</li> </ul>

	<p>հիմնավոր որոշումներ կայացնել փոփոխվող աշխատանքային պայմաններում,</p> <ul style="list-style-type: none"> <li>- կատարել օդի, հողի, ջրի, կենդանի օրգանիզմների նմուշառումներ,</li> <li>- արտակարգ իրավիճակում արագ կողմորոշվել և որոշումներ ընդունել,</li> <li>- պահպանել ներքին կարգը, հակահրդեհային և տեխնիկական անվտանգության կանոնները,</li> <li>- օգտվել մասնագիտական գրականությունից,</li> <li>- օգտվել համացանցից և հասանելի այլ աղբյուրներից,</li> <li>- ընտրել, հավաքել և օգտագործել անհրաժեշտ սարքեր, սարքավորումներ,</li> <li>- ճշգրիտ գրանցել արդյունքները և կատարել մաթեմատիկական հաշվարկներ,</li> <li>- օգտվել նորմատիվ փաստաթղթերից, ստանդարտներից և տեխնիկական պայմաններից,</li> <li>- կազմել հաշվետվություններ և այլ փաստաթղթեր,</li> <li>- ցուցաբերել անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնություն,</li> <li>- աշխատել լաբորատորիայում և դաշտային պայմաններում,</li> <li>- ներկայացնել համապատասխան տեղեկատվություն՝ անմիջական ղեկավարությանը:</li> </ul>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b></p>	<p>Պատասխանատվության բարձր զգացում, կարգապահություն, ազնվություն, հաղորդակցվելու, խնդիրները հայտնաբերելու և արագ որոշումներ ընդունելու կարողություն:</p>